



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.....” 2021թ.

N.....

«ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Միքայելյանին
հասցե՝ ք. Երևան, Բաբայան 10/1

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Վարչական վարույթ հարուցելու և լուսմներ իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Ոսկանյան,

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 155-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ «ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու վերաբերյալ:

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լուսմները տեղի կունենան 2021 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 12:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Խնդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի քննության համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետով ընդերքօգտագործման իրավունքը կասեցվում է մինչև սահմանված տեղեկատվության ներկայացումը (բայց ոչ ավելի, քան 120-օրյա ժամկետով):

Կից ներկայացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 155 -Ա հրամանը – 2 թերթ:

11.02.2021

X 

ԼԻԼԻԱ ՇՈՒՇԱՆՅԱՆ

Հարգանքով՝

Signed by: SHUSHANYAN LILIA 7605910584

Լ. Շուշանյան